ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մարտի 2021 թվականի № Ա
քաղ. Երևան

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

2) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի N308Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի №2 հավելվածի №2-18 ձևով սահմանված տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ն է,

3) «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի 4-րդ եռամսյակի արդյունքներով Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2021 թվականի մարտի 3-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտմամբ,

4) Որոշման պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով 2021 թվականի փետրվարի 25-ից Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական

վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 25-ի №ԳԲ/34.3-Մ2-7/562-2021 գրությամբ,

5) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի մարտի 4-ի №0053_2021 գրությամբ հայտնել է, որ Ընկերության նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց կիրառելու հիմքերը բացակայում են, քանի որ՝

ա. Ընկերությունը Որոշմամբ հաստատված տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2021 թվականի հունվարի 20-ին,

բ. Ընկերությունն անտեղյակ լինելով Որոշման մեջ Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի №363Ն որոշմամբ կատարված փոփոխությունից՝ Որոշմամբ հաստատված տեղեկատվությունը ներկայացրել է նախկին տարբերակով՝ չլրացնելով Որոշմամբ հաստատված կարգի №1 հավելվածի 16-րդ կետով նախատեսված Տեղեկատվության ձևը և այդպիսով համարելով, որ Ընկերության խախտումը կայանում է Տեղեկատվությունը ոչ պատշաճ ներկայացնելու մեջ,

գ. Որոշմամբ հաստատված կարգի №1 հավելվածի 16-րդ կետով նախատեսված տեղեկությունը Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացվել է դեռևս 2020 թվականի դեկտեմբերի 22-ի №0303_2020 գրությամբ,

դ. Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնելու մասին Հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 21-ի №432Ա որոշումն (այսուհետ՝ №432Ա որոշում) Ընկերությունը ստացել է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով 2019 թվականի նոյեմբերի 23-ին, հետևաբար այն անբողոքարկելի է դարձել 2020 թվականի հունվարի 24-ին,

ե. №432Ա որոշումը վերաբերում է Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ներկայացման ժամկետի խախտմանը, իսկ 2021 թվականի փետրվարի 25-ից հարուցված վարչական վարույթի շրջանակում քննվող խախտումը վերաբերում է հաշվետվության սահմանված ձևի խախտմանը,

6) Հանձնաժողովի կողմից 2019 թվականի նոյեմբերի 21-ին ընդունվել է №432Ա որոշումը, որով Ընկերությունը նախազգուշացվել է Որոշմամբ նախատեսված Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունների սահմանված ժամկետի խախտման համար,

7) №432Ա որոշումն Ընկերությանը հանձնելու ամսաթիվը ճշտելու նպատակով Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 15-ի №ՍԱ/34.3-Մ2-6/740-2021 գրությամբ դիմել է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությանը, որին ի պատասխան վերջինս 2021

թվականի մարտի 17-ի N2/3-1057 գրությամբ տեղեկացրել է Ընկերությանը հասցեագրված՝ №RR275244789AM գծանիշ կոդով առաքանին (№432Ա որոշման պատճենը) 2019 թվականի նոյեմբերի 26-ին Թադևոսյան ազգանվամբ անձին հանձնելու մասին,

8) №432Ա որոշումն Ընկերությանն առաքելու մասին՝ վերջինիս և «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած ժամկետների անհամապատասխանությունը պարզելու նպատակով Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 23-ի №ԳԲ/34.2-Մ/2-7/856-2021 գրությամբ դիմել է Ընկերությանը՝ միաժամանակ 10 օրով երկարաձգելով 2021 թվականի փետրվարի 25-ից հարուցված վարչական վարույթի ժամկետը, որին ի պատասխան Ընկերությունն իր 2021 թվականի մարտի 25-ի №0074_2021 գրությամբ հայտնել է առարկություններ չունենալու մասին,

9) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

ա. Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացվել Որոշմամբ սահմանված ժամկետի խախտմամբ,

բ. Ընկերության կողմից Որոշմամբ սահմանված ժամկետում Տեղեկատվության չներկայացման արդյունքում, համաձայն «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի (էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ հինգ միլիոն դրամից տասը միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում)՝ առկա է արարքի կրկնակիություն,

գ. Ընկերության 2021 թվականի մարտի 4-ի №0053_2021 գրությամբ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն, քանի որ՝

- չնայած 2020 թվականի 4-րդ եռամսյակի համար Տեղեկատվության և Որոշմամբ հաստատված կարգի №2 հավելվածի №2-1 և №2-7 ձևերով սահմանված 2020 թվականի դեկտեմբեր ամսվա տեղեկատվությունների ներկայացման ժամկետների համընկնելուն, դրանք չեն հանդիսանում մեկ միասնական տեղեկատվություն, ուստի 2021 թվականի հունվարի 20-ին Հանձնաժողով է ներկայացվել միայն Որոշմամբ հաստատված կարգի №2 հավելվածի №2-1 և №2-7 ձևերով սահմանված տեղեկատվությունները, իսկ նույն հավելվածի

№2-18 ձևով սահմանված Տեղեկատվությունը Որոշմամբ սահմանված ժամկետում չի ներկայացվել,

- Որոշման մեջ լրացումների և փոփոխությունների մասին Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի №363Ն որոշումը, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի՝ ուժի մեջ է մտել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, այն է՝ 2020 թվականի հոկտեմբերի 16-ից: Այդուհանդերձ, Որոշման մեջ լրացումների և փոփոխությունների մասին Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի №363Ն որոշման պատճենը Ընկերությանն ուղարկվել է Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 15-ի №ԱՍ/34.3-Մ2-7/4345-2020 գրությամբ,

- Ընկերության 2020 թվականի դեկտեմբերի 22-ի №0303_2020 գրությունը վերաբերում է սակագների վերանայման գործընթացի շրջանակում ներկայացված՝ սահմանվող սակագնի հաշվարկում ներառվող Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկի մարման և սպասարկման գծով 2020 թվականի դեկտեմբեր ամսվա կանխատեսվող ծախսերին՝ արտահայտված եվրոյով, մինչդեռ Տեղեկատվությամբ պահանջվում է ներկայացնել նշված վարկի մարման և սպասարկման գծով հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության կայանից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագների հաշվարկում ներառված, փաստացի կատարված (արտահայտված ինչպես արտարժույթով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության դրամով) վճարումների և դրանց տարբերությունների արդյունքում տվյալ ժամանակաշրջանի սկզբին և ավարտին ձևավորված մնացորդների վերաբերյալ տեղեկություններ: Ավելին, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս ֆինանսների նախարարության, Գերմանիայի վերակառուցման ու զարգացման բանկի (KFW) և Ընկերության միջև կնքված փոխառության պայմանագրի շրջանակում վարկի մարման և սպասարկման պարտավորությունների գծով 2020 թվականի 4-րդ եռամսյակում հերթական վճարումը նախատեսված է 2020 թվականի դեկտեմբերի 30-ին և առնվազն նշված ժամկետում վճարումը կատարելուց հետո Ընկերությունը կարող էր ներկայացնել վարկի մարման և սպասարկման փաստացի վճարումներին առնչվող տեղեկատվություն, այլ ոչ թե՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ին: Վարկի մարման և սպասարկման գծով փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը 2020 թվականի դեկտեմբերի 22-ի №0303_2020 գրությամբ Հանձնաժողով ներկայացված չլինելու մասին է վկայում նաև այն, որ առկա են անհամապատասխանություններ նշված գրության և 2021 թվականի մարտի 3-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացված

Տեղեկատվության ցուցանիշների միջև: Նշվածից ակնհայտ է, որ տվյալ դեպքում առկա է ոչ թե Տեղեկատվության ներկայացման ձևի, այլ Որոշմամբ սահմանված ներկայացման ժամկետի խախտում, ուստի և №432Ա որոշումը և 2021 թվականի փետրվարի 25-ից հարուցված վարչական վարույթը վերաբերում են նույն արարքին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտմանը, քանի որ ինչպես Որոշմամբ հաստատված կարգի №2 հավելվածի №2-1 և №2-7 ձևերով սահմանված տեղեկատվությունները, այնպես էլ Տեղեկատվությունը որևէ ձևաչափով Որոշմամբ սահմանված ժամկետում Հանձնաժողով չեն ներկայացվել,

- №432Ա որոշումը, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի անբողոքարկելի է դարձել 2020 թվականի հունվարի 27-ին, քանի որ ըստ «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի մարտի 17-ի N2/3-1057 գրության՝ №432Ա որոշման պատճենն Ընկերությանը հանձնվել է 2019 թվականի նոյեմբերի 26-ին և ուժի մեջ է մտել նույն ամսվա նոյեմբերի 27-ին,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը տուգանել հինգ միլիոն դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝

   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով նախատեսված գումարը N900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

   2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
մարտի 2021թ.